


ՀԱՅԵՐԵՆԻ ՇԵՇՏԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ: ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԼԵԶՎԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՎԻՃԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ

ՄԱՐԻԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Հոդվածն անդրադառնում է լեզվաբանության կարևոր բնագավառներից մեկի՝ կետադրության հարցերին ուղղված հայացքի թարմացման անհրաժեշտությանը շեշտի գործածության օրինակով:

Այն, որ պարտադիր կամ գործնականում հաճախ «կամավոր-պարտադիր» շեշտադրման պահանջը տարակուսելի է, կարելի է տեսնել՝ ծանոթանալով մի շարք հայ լեզվաբանների փաստարկներին¹, առավել ևս՝ արտասահմանյան բազմաթիվ լեզվաբանների զարգացրած տեսություններին, որոնք լեզվին առնչվող հարցերի վերաբերյալ իրար ճշգրտող անհաշիվ տրամաբանություններ են զարգացրել:

Սույն հոդվածի առարկան է արդի լեզվաբանության որոշ տեսությունների հնարավոր նպաստը շեշտի գործածության, ինչպես նաև առհասարակ կետադրության գործառնությունների ըմբռնման հարցում: Հայ և այլազգի լեզվաբանների պնդումները, որոնք դիտարկվում են հոդվածում, ստեղծում են մոտեցումների շրջանակ, որի առնչությամբ կարելի է քննարկել կետադրության և մասնավորապես շեշտի գործածության կանոնները:

Հոդվածը փորձ է նկատելու և առանձնացնելու որոշ կողմնորոշյալ համաշխարհային լեզվաբանությունից, որոնք կարող են օգնել ավելի համարձակ լինելու հայոց լեզվի արդի խնդիրների լուծումներ որոնելիս:

Բանալի բառեր – *հրամայական եղանակի բայաձևերի կետադրություն, կոչականի կետադրություն, շեշտի գործածություն, լեզու-խոսք հակադրություն, լեզվաբանական մակարդակների հարաբերություններ, լեզվական ձևի սոցիալական նշանակություն, շեշտի գործարանական ներուժ*

* **Մարիամ Կարապետյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի դոցենտ

Мариам Карапетян – кандидат филологических наук, доцент кафедры новых медиа и коммуникаций ЕГУ

Mariam Karapetyan – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of New Media and Communications

Էլ. փոստ՝ mariamkarapetyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0009-0003-4380-0294>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 25.08.2024

Գրախոսվել է՝ 01.11.2024

Հաստատվել է՝ 06.11.2024

© The Author(s) 2024

¹ Տե՛ս Մ. Կարապետյան, Հայերենի շեշտի գործածությունը: Հայաստանյան լեզվաբանական ավանդույթները՝ որպես կետադրության համատեքստ, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2024, 2(44), էջ 101-113:

Կետադրության տարբեր հարցեր քննարկող լեզվաբանների հիմնավորումների դիտարկումը ցույց է տալիս, որ լեզվաբանական վերլուծությունների անհրաժեշտ մակարդակներին կամ դրանց բացակայությանը վերաբերող հարցերն առանցքային նշանակություն ունեն կետադրության ուսումնասիրման համար: Մասնավորապես ձևաբանությունը, շարահյուսությունը և գործաբանությունը միասին, միևնույն շարքում դիտարկելու ավանդույթը կամ դրա բացակայությունը, կարծում եմ, կարևոր հանգամանքներ են:

Այս հասկացությունների բացատրական ներուժը, անշուշտ, ավելի մեծ և ավելի հավաստի է, երբ դրանք դիտարկում ենք՝ նկատի ունենալով լեզվաբանական հարացույցների տեղաշարժերը ժամանակի ընթացքում և տեսությունից տեսություն, այսինքն՝ երբ պատմական հեռանկար ենք ավելացնում դրանց առաջարկած մոտեցումներին՝ տրամաբանությունների զարգացմանը հետամուտ լինելու նպատակով: Այսպիսի պատմական հեռանկարը տեղին կլիներ մասնավորապես հայաստանյան լեզվաբանության կողմնորոշումների առնչությամբ՝ ուրվագծելով լեզվաբանության համաշխարհային ընթացքի հետ հայաստանյան լեզվաբանության միտումների համեմատության համատեքստ: Այսպիսի կարևոր լրացումը, այնուհանդերձ, դուրս է սույն հոդվածի տեսադաշտից: Արդի լեզվաբանական տեքստերին ստորև արվող հղումները՝ միտված են առավելապես տարբեր մոտեցումների գուգահեռ նկարագրմանը՝ հարցադրելով դրանց՝ ներկայումս հնարավոր նպաստները հայաստանյան լեզվաբանության որոշ հարցեր վերանայելիս:

Կարևոր հանգրվաններից մեկը, որին կարելի է արդի լեզվաբանությանը վերաբերող հարցումներ ուղղել, անշուշտ, կառուցաբանական և հետկառուցաբանական ավանդույթներն են:

Ըստ արդի լեզվաբանության հիմնադիր Ֆ. Սոսյուրի տեսության մեկնաբաններից մեկի դիտարկման՝ Ֆ. Սոսյուրը ձևաբանությունը և շարահյուսությունը տեղադրում էր միևնույն հարթության մեջ՝ համարելով, որ երկուսն էլ պատկանում են լեզվի շարույթային չափմանը, որը լեզվաբանը հակադրում էր հարացուցային չափմանը²: Նույն տեսաբանի դիտարկմամբ՝ Սոսյուրի տեսությունը մեկնաբանելիս առաջ է քաշվել այն տեսակետը, որ վերջինս շարահյուսությունը դասել է խոսքի (parole) տիրույթին, քանի որ խոսքի տիրույթին է դասել լեզվի շարույթային չափումը: Շարահյուսությունը սկսել է խոսքի ոլորտին դասվել հատկապես սերող լեզվաբանության տարածումից ի վեր, և այս մոտեցմամբ շարահյուսությունն ընկալվել է միայն որպես լավ ձևակերպված նախադասություններ կազմելու կանոնների համակարգ: Բացառվել է որևէ

² Տե՛ս **D. D'Alfonso**, The Dynamic Turn: On Syntax between Langue and Parole, Cahiers Ferdinand de Saussure, 62 (2009), էջ 128: Այսուհետ սույն աշխատանքին հղում անելիս կնշվեն հեղինակի անունը և մեջբերման էջը:

նշանակալի դեր, որ շարահյուսությունը կարող է ունենալ խոսողի անհատական ակտիվության համար (D. D'Alfonso, 130):

Հայերենի քերականության տրամաբանությունը, թերևս, որոշ իմաստով համեմատելի է սերող քերականության տրամաբանության հետ՝ մասնավորապես լեզվական կարողության և գործողության հակադրության իմաստով: Ինչպես սերող քերականության տեսաբանները, որոնք կենտրոնանում են խոսողի լեզվական կարողության վրա՝ բացառելով գործաբանական, համատեքստային տեսանկյունները (D. D'Alfonso, 118), հայ լեզվաբանները մեկնարկում են հիմնական նշանակությունների ու կադապարների որոշ քանակից՝ տեսադաշտից դուրս թողնելով բուն խոսողության պրոցեսը: Հայաստանյան լեզվաբանության այս միտումին ևս կարելի է հակադրել *դինամիկ շարահյուսության* մոտեցումները, ինչպես դրանք սերող քերականության մոտեցումներին է հակադրում հետևյալ մեջբերման հեղինակը. «Դինամիկ քերականության լեզվաբանական տեսության մեջ քերականությունն ըմբռնվում է որպես կամուրջ, որը կապում է խոսողի բառային գիտելիքը լեզվի կիրառությունների որոշ համատեքստային կողմերի հետ» (D. D'Alfonso, 119): Այդպիսով դինամիկ քերականության տեսությունը հավակնում է նոր տեսական մեկնաբանություն տալ Սոսյուրի՝ շարահյուսության վերաբերյալ ենթադրաբար ունեցած դիրքորոշմանը, այն է՝ շարահյուսությունը պատկանում է խոսքի ոլորտին: Դինամիկ քերականության հայտնությամբ, ըստ նույն տեսաբանի, շարահյուսության՝ որպես բառային միավորների միջոցով նախադասությունների կառուցման կանոնների համակարգի մասին պատկերացումից անցում է կատարվում դեպի ավելի ընդգրկուն ըմբռնման, այն է՝ շարահյուսության՝ որպես առավել շարժուն հարացույցի: Սա թույլ է տալիս քերականական վերլուծությունը դիտարկել որպես *տեքստի մշակման* համակարգ, որը «ցուցաբերում է ճկունություն, բարձր զգայունություն համատեքստի նկատմամբ և անգամ որոշակի «հարմարվելու ունակություն» իր խնդիրը լուծելիս» (D. D'Alfonso, 130): Այս մոտեցմամբ՝ «բնական լեզվի շարահյուսությունն ըմբռնվում է որպես տեքստի արտադրության և մեկնաբանության գործաբանական ռազմավարություն [...] Լեզվական կարողությունը դառնում է ճանաչողական կողմնորոշում՝ տիրապետելու համատեքստում տեքստ ստեղծելու ռազմավարության» (D. D'Alfonso, 130): Իսկ *բառերի միասնությունը, բառակապակցությունների, նախադասությունների և դիսկուրսի միասնությունն* այս տեսությունը բացատրում է *շարույթային և հարացուցային չափումների փոխազդեցությամբ, ոչ թե միայն կառուցվածքային կադապարների կատարմամբ* (D. D'Alfonso, 130):

Ինքնին «շարահյուսություն» հղացքը, որ հայաստանյան լեզվաբանության մեջ վկայաբերվում է որպես կետադրական կանոնների, տվյալ պարագայում՝ որպես շեշտադրման կանոնների հիմնավորման բնագավառ, տեսականորեն կարող է վերանայվել ներկայացված մոտեցումների դիտակետից և լուրջ փոփոխություններ բերել: Այս դիրքից կարելի է անգամ հարց տալ՝ հայերենի

նման ըմբռնումը և դասավանդումը չե՞ն նպաստի արդյոք հայերենի՝ որպես կենդանի լեզվի և, դրանով պայմանավորված, նաև լեզվակիրների զարգացմանը: Հաղորդակցային առաջնահերթությունների և արտաքին աշխարհի նկատմամբ զգայուն դարձող հայերենն արդյոք չի՞ սկսի լայնանալ լեզվակիրների գիտակցության մեջ՝ կանոնների համակարգերից, լավագույն դեպքում՝ սրբացված լեզվի լուսապսակից գատ ձեռք բերելով աշխարհի մասին գիտելիք սովոր միջավայրի նշանակություն:

Դինամիկ շարահյուսության ներկայացված մոտեցումը, անշուշտ, միայն մեկն է արդի լեզվաբանության բազմաթիվ մոտեցումներից, սակայն թույլ է տալիս առնվազն ցույց տալ, որ ճկուն կարող է լինել նաև ինքնին շարահյուսության ըմբռնումը, և որ սա «հղացքները ճկելու» հնարավորության օրինակներից մեկն է: Բացի այդ, առանցքային նշանակություն ունի նաև այն ընկալումը, որ առհասարակ դիսկուրսի մակարդակի քննությունն անհրաժեշտ լրացում է շարահյուսական մոտեցմանը: Մեջբերելով Ֆ. Մոսյուրի դիտարկումը³ դիսկուրսի վերաբերյալ՝ տեսաբանը գրում է, որ Մոսյուրը «հավատում էր դիսկուրսի՝ մարդու լեզվական ունակության բացահայտման վայրի վճռորոշ դերին, [վայրի], որտեղ լեզվի սոցիալական կիրառության մեջ գործող հակամարտ ուժերը՝ սոցիալական վերահսկողությունը և անհատական ստեղծագործականությունը, միջնորդված են և չափավոր» (D. D'Alfonso, 129): Ներկայացված տեսությունը հավակնում է լեզվաբանության մոդուլային (*շարահյուսության, իմաստաբանության, գործարանության* ուղորտները՝ գումարած *շարահյուսություն-իմաստաբանություն* և *իմաստաբանություն-գործարանություն* փոխազդեցության ոլորտները) վարկածը փոխարինելու բառային գիտելիքի և լեզվական հաղորդակցության գործարանության փոխազդեցության դինամիկ հղացքով (D. D'Alfonso, 129):

Բացի վերը բերված ըմբռնումից՝ քննարկվող հասկացությունների որոշարկման համար կարևոր նշանակություն կարող են ունենալ *իմաստաբանության* և *գործարանության* այլ մեկնաբանություններ ևս և այն, թե ինչպես կարող են այդ հասկացությունները նպաստել հողվածի քննարկած հարցի լուսաբանմանը:

Լեզվաբանական գրականության մեջ իմաստաբանության ու գործարանության հարաբերությունների մեկնաբանությունները բազմաթիվ են և հաճախ հակասական. դրանք երբեմն հստակորեն սահմանազատվում են, երբեմն՝ առաջնայնություն ստանալով՝ ներկայացվում որպես մեկը մյուսի ենթաբաժին, ըստ այլ մեկնաբանությունների՝ դրանք փոխկապակցված և փոխլրացնող բնագավառներ են՝ հաճախ ոչ հստակ սահմանով: Մույն հողվածի տեսածիրից դուրս թողնելով բազմաթիվ տեսությունների առաջարկած մոտեցումների մանրամասնությունները և չդիրքավորվելով տեսություններից որևէ մեկի

³ Մոսյուրը պնդում է, որ դիսկուրսը կապեր է հաստատում «լեզվական ձև ստացած հղացքների միջև, երբ լեզուն [langue] միայն առանձին հղացքներ է տրամադրում, որոնք սպասում են որևէ հարաբերության մեջ մտնելու, որպեսզի միտք արտահայտեն»: Մեջբերվում է ըստ՝ D. D'Alfonso, նշվ. աշխ., էջ 129:

շրջանակում՝ ներկայացնենք միայն որոշ դրույթներ, որոնք թույլ կտան հիմնական գծերով բնութագրել այդ բնագավառները՝ որպես *կետադրության հարցի դիտարկման հնարավոր համատեքստեր*:

Ինչպես նկատում է իմաստաբանության և գործաբանության հարաբերությունները քննարկող տեսաբաններից մեկը, դրանց տարբերակման համար անհրաժեշտ նախնական քայլերից է պարզելը՝ նշանակության որ կողմերն են արդյունք գիտելիքի և կարծիքների, որոնք մարդ ունի արտալեզվական իրողությունների մասին, և որոնք են նշանակության բուն լեզվաբանական կողմերը⁴: Այս նպատակով նա անդրադառնում է նշանակության (signification) և նշանակման (designation) տարբերություններին՝ մասնավորապես նշելով, որ նշանակությունը վերաբերում է լեզվին, իսկ նշանակումը՝ դիսկուրսին: Եթե նշանակության հարաբերությունները կայուն են, ապա նշանակման հարաբերությունները փոփոխական են: Եվ միայն նշանակումն է կարող փոխաբերական լինել (E. R. Martínez, 362): Մեկնարկելով այս տարբերությունից՝ նա նկատում է, որ այն էական է կառուցվածքային իմաստաբանության համար, քանի որ միայն լեզվական նշանի բովանդակությունն է, որ զուտ լեզվական բնույթ ունի և կարող է կառուցվել: Ի տարբերություն դիսկուրսի՝ համատեքստային կամ իրավիճակային բնույթ ունեցող նշանակությունների լեզվական նշանների բովանդակություններն ընդհանուր են կիրառման բոլոր իրավիճակների համար (E. R. Martínez, 362):

Անհիմն չի թվում հայերենի շեշտն այս տեսանկյունից դիտարկելը. զուտ լեզվական նշանակության աղոտությունը, եթե ոչ բացակայությունը և ընդհակառակը՝ համատեքստային իմաստի ակտիվությունը հուշում են հանել շեշտը նաև իմաստաբանության ոլորտից և դիտարկել այն միայն գործաբանության դիրքերից, ուստիև համապատասխան ազատություններով օժտել այն, ավելի ճիշտ՝ ճանաչել այդ ազատությունները: Իհարկե, կարևոր հարց է նաև այն, թե ներկայացված լեզվաբանական դատողություններում նշանակության մեկնաբանությունը՝ որպես «բառային դաշտերի» և գործառական հակադրությունների համակցության շրջանակ (E. R. Martínez, 363), որքանով կարելի է տարածել կետադրական նշանների վրա:

Ինչպես նկատում է Մալքոլմ Փարքսն Արևմուտքում կետադրական նշանների զարգացման պատմությունը ներկայացնող իր ուսումնասիրության մեջ, «կետադրությունը դառնում է գրավոր միջավայրի «գործաբանության» առանձնահատկություններից մեկը»⁵: Մեկ այլ տեսաբանի դիտարկմամբ՝ «կետադրա-

⁴ Տե՛ս E. R. Martínez, *Delimiting Semantics and Pragmatics. a Functional, Structural Criterion*, Atlantis, 18 (1996), № 1/2, էջ 360: Այսուհետ սույն աշխատանքին հղում անելիս շարադրանքում կնշվեն հեղինակի անունը և մեջբերման էջը:

⁵ M. B. Parkes, *Pause and Effect: An Introduction to the History of Punctuation in the West*, Cambridge, Scholar Press, 1992, p. 1-2.

կան նշաններին վերաբերող ամենահետաքրքրական բանը ոչ թե նրանց սահմանային կարգավիճակն է հռետորական և կազմակերպական գործառույթների միջև կամ դրանց ֆիզիկական տեղադրությունը տառերի մեջտեղում (կամ վերևում, ներքևում, շուրջը), այլ դրանց իմաստաբանական միջանկյալությունը: Կարճ ասած՝ կետադրական նշաններն իմաստաբանորեն անհստակ են: Դրանք լեզվական կողմի մի մասն են և այդ իմաստով ընդհանուր են ու ենթակա են (դինամիկ) ավանդականացման (conventionalization): Կետադրության բազմաթիվ ձեռնարկներ, ինչպես նաև խմբագիրներ, որոնք փորձել են «կանոնավորել» գրողների կիրառած կետադրությունը, վկայում են, որ կետադրությունը հաստատությանցված է: Այդուամենայնիվ, կետադրական նշանները զուրկ են որոշակի իմաստաբանական բովանդակությունից և նշանակալիորեն ավելի անորոշ են, քան շատ այլ նշանակիչներ»⁶:

Կետադրական նշանները պատմական զարգացման համատեքստում դիտարկելը երևան է բերում դրանց նշանակությունների և գործաբանության կիրառման այլ բնագավառներ ևս: Հետազոտողներից մեկի դիտարկմամբ՝ գրավոր տեքստում դիսկուրսի կառուցվածքի երեք փոխկապակցված համակարգերից (ա) բառային ցուցիչներ՝ ներառյալ պարբերությունները և հուշող բառերը, (բ) կետադրական ցուցիչներ, (գ) գրաֆիկական ցուցիչներ՝ ներառյալ գլուխների առանձնացումը, թվարկումները կամ համարակալումները) երկրորդն ու երրորդը գրեթե անտեսվել են լեզվաբանների կողմից: Սակայն որոշ հետազոտություններ կոտրել են կաղապարները: Դեռ 1990-ականներին աշխատություններ են գրվել տեքստի ֆորմատավորման հրամանները տեքստի ավտոմատ ստեղծման համակարգում ներառելու վերաբերյալ⁷:

Որպես մեր քննարկած հարցը դիսկուրսի մակարդակում դիտարկելու տպավորիչ հիմնավորում է հնչում նաև տեսաբանների կողմից հնչեցրանգի բնութագրումը դիսկուրսի հետ առնչության դիտանկյունից: Բազմաթիվ ուսումնասիրություններում քննարկվում են ձայնի ուժգնության տարբերությունների նշանակությունները. որոշ լեզուներում դրանք կարող են փոխել բառի նշանակությունը, մեկ այլ դեպքում դրանք կարող են հուշել դիսկուրսի մակարդակում առկա տեղեկություն կամ տեղեկացնել խոսողի հույզերի ու վերաբերմունքի մասին: Հնչեցրանգային-մեղեդային նման փոփոխությունների որոշ տարբեր բնորոշվում են բառի տեսակետից, այնինչ «որոշ մեղեդային տարբեր», ինչպես նշում է տեսաբաններից մեկը, «արտադրվում կամ վերլուծվում են «հետբառա-

⁶ R. Tartakovsky, E. E. Cummings's Parentheses: Punctuation as Poetic Device, *Style*, Vol. 43, No. 2, Temporal Paradoxes in Fiction and Stylistics in American Literatures (Summer 2009), p. 215.

⁷ Տե՛ս R. Dale, The Role of Punctuation in Discourse Structure, *Natural Language Understanding and Generation*, Asilomar, 1991, էջ 13-14:

յին» եղանակով՝ բառերի հաջորդականությունների կամ արտահայտությունների նկատմամբ՝ իրենց ավելի լայն՝ դիսկուրսի համատեքստում»⁸: Ավելին՝ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կապ գոյություն ունի դիսկուրսի տարբեր տարրերի համեմատական հասանելիության և դրանց հատկացվող քերականական դերի ու մակերեսային, առավել նկատելի դիրքի միջև. «Առավել հասանելի բաղադրիչները որպես կանոն ըմբռնվում են որպես քերականական սուբյեկտներ, որպեսզի հանդիպեն արտասանության սկզբում [...]»⁹: Եթե այս հայացքով դիտենք, օրինակ, կոչականի կետադրությունը, ապա կետադրական կանոն ձևակերպելիս ստիպված կլինենք մեջտեղ բերել այնպիսի հարցեր, ինչպիսին է, օրինակ, առանձնացող քերականական դիրքը բառերի ու արտահայտությունների ձևավորած համատեքստերի առանձնահատուկ տրամաբանությունների համատեքստում դիտարկելը:

Մեկ այլ մեկնաբանությամբ՝ խոսքի ոչ խոսքային կողմերը (ձայնի ելևեջը, ուժգնությունը) ոչ խոսքային հաղորդակցության կողերից են¹⁰ և «հակված են լինելու ինդեքսային (ցուցչային), քանի որ մատնանշում են ուղարկողի ներքին կամ սոցիալական վիճակի կողմերը»¹¹ և կապված են տվյալ տեղին ու պահին: Հիմնվելով այս մեկնաբանության վրա՝ կարող ենք ասել, որ շեշտի կայունությունը գրկում է այս նշանն իր ցուցչայնությունից, այն է՝ շեշտն այլևս ուղղակիորեն չի վերաբերում այն հանգամանքներին կամ համատեքստին, որոնցում կազմվում է տվյալ նախադասությունը¹²:

Այսպիսով՝ կարծում եմ՝ առհասարակ կետադրական նշանների և մասնավորապես շեշտի դիտարկման համար կարևոր մեկնակետ կարող է լինել այն հարցը, թե *ինչպես են համատեքստային գործոնները կողավորվում տեքստի մեջ*: Մյուս կողմից՝ նման մեկնակետ պիտի լինեն *լեզվի կիրառման և հասկացման այն սկզբունքները, որոնք կողավորված չեն արտահայտություններում*: Գործաբանությանը բնորոշ այս երկու ընկալումները¹³ կարող են ուղի դառնալ վերանայելու կետադրական կանոնի առկա հիմքերը:

Հանրալեզվաբանության նպաստը հարցի քննարկմանը

Բացի լեզվաբանական հասկացությունների նշանակությունից ու լեզվաբանական մակարդակների հարաբերություններից՝ առհասարակ կետադրության և մասնավորապես շեշտի առնչությամբ տրամաբանական է դիտարկել նաև գրական ու խոսակցական հայերենների հարաբերությունները՝ որպես լեզու-

⁸ M. E. Beckman, J. J. Venditti, Tone and Intonation, in W. J. Hardcastle (ed.), J. Laver (ed.), F. E. Gibbon (ed.), *The Handbook of Phonetic Sciences*, Oxford/Malden, MA: Wiley-Blackwell, 2010, էջ 609:

⁹ Նույն տեղում, էջ 15:

¹⁰ Հ. Քայադյան (խմբ.), Մեդիայի նշանագիտության ներածություն, Եր., ԵՂՀ հրատ., 2018, էջ 70:

¹¹ Նույն տեղում, էջ 69:

¹² Ցուցչայնության մասին տե՛ս նաև J. Åkerman, Indexicals and Reference-Shifting: Towards a Pragmatic Approach, <https://philarchive.org/archive/KERIAR>:

¹³ Տե՛ս E. R. Martínez, նշվ. աշխ., էջ 364:

խոսք, շարահյուսություն-իմաստաբանություն-գործաբանություն առանցքների դրսևորում: Խոսքն այստեղ ոչ թե հնչերանգային տարբերությունների գործնական ուսումնասիրությանն է վերաբերում, այլ գրավոր և բանավոր հայերենների ազդեցությունների թելադրող նշանակության բացահայտմանը: Հարցն այն է՝ կարո՞ղ է արդյոք գրական լեզվի կամ խոսքի առաջնայնության հանգամանքն էական նշանակություն ունենալ քննարկվող խնդրի՝ հայերենում շեշտի գործածության համար: Հարկ է դիտարկել՝ ինչ դեր կարող են ունենալ գրավոր և բանավոր լեզուների փոխազդեցությունների վեկտորները լեզվական տարբեր հարցերի և մասնավորապես քննարկվող հարցերի առնչությամբ: Եվ ուրեմն՝ նախ՝ ինչպե՞ս են հանրալեզվաբանության մեջ բնութագրվել գրավոր և բանավոր հայերենները և դրանց առնչությունների վեկտորները:

Թ. Ղարազյուլյանը, հղում անելով համապատասխանաբար Էդ. Աղայանին, Գ. Ջահուկյանին և Գ. Սևակին, նկատում է. «Հայ լեզվաբանական գրականության մեջ գրական լեզուն սահմանվել է հետևյալ կերպ. «Գրական լեզուն ոչ այլ ինչ է, եթե ոչ գրական մշակության ենթարկված ու գրականության մեջ դրսևորվող խոսակցական լեզուն», կամ՝ «Գրական լեզուն ոչ այլ ինչ է, եթե ոչ ժողովրդի խոսակցական ընդհանուր լեզվի գրավոր և մշակված վիճակը», կամ՝ «Գրական լեզուն սովորաբար հանդիսանում է տվյալ հասարակության գրագետ խավերի հաղորդակցման միջոցն ընդհանրապես, ինչպես և գրքի ու հրապարակային, հանրային հարաբերությունների ընդունված լեզուն»¹⁴: Գրականության ինստիտուտի հրատարակած նույն ուսումնասիրության մեջ նաև նշվում է. «Ժողովրդախոսակցական լեզուն ներկայումս գրական լեզվի խոսակցական տարբերակի միջնորդությամբ հանդես է գալիս որպես գրական լեզվի հարստացման աղբյուրներից մեկը, որի հետ նա շփվում է անմիջականորեն»¹⁵:

Հ. Ջաքարյանի ձևակերպմամբ՝ «լեզվական կառուցվածքում արտացոլվում են և՛ խոսքային իրադրությունը (միկրոիրադրություն), և՛ լեզվավիճակն ու լեզվի գոյության էկոլոգիական պայմանները (մակրոիրադրություն): Քանի որ խոսքային իրադրությունն ու լեզվավիճակը որոշակի կառուցվածքով օժտված համակարգեր են, ուստի խնդիրը երկու կարգի՝ լեզվական և հասարակական կառուցվածքների միջև որոշակի կապի, փոխհարաբերության պարզաբանումն է»: Կիրառելով հանրալեզվաբանության ուսումնասիրման տարածք անցնող նշված եզրույթները՝ կարելի է պնդել, որ գրական լեզուն մասնավորապես շեշտի առնչությամբ առհասարակ անտեսում է միկրոիրադրությունը կամ առնվազն գոհանում դրա «միջինացված» և պայմանական նշույթավորմամբ: Իսկ մակրոիրադրությունը լեզվական մասնավոր իրադրությունների նկատմամբ առնվազն անբավարար զգայունությունն է: Այս վերջինը դրսևոր-

¹⁴ «Մամանակակից հայերեն խոսակցական լեզուն», ՀՄՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, խմբ. Է. Աղայան, Եր., ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 24:

¹⁵ Նույն տեղում, էջ 32:

վում է նաև լեզվական, մասնավորապես կետադրական բազմաթիվ կանոնների մշտական խախտումներով անգամ լեզվաբանների կողմից: Ստացվում է կանոնացված լեզուն բազմաթիվ նրբություններ ունի, որոնք գործնականում անտեսանելի են, որոնց հաճախ որևէ նշանակություն չի վերագրվում լեզվակիրների, անգամ լեզվաբան լեզվակիրների կողմից, իսկ մեկ այլ դեպքում՝ գրական լեզվի կանոնն է մնում որպես իրադրական բազմազանության սուսկ պայմանական արձանագրող: Երկու դեպքում էլ ունենք գրական լեզվից խոսակցական լեզվի կամ խոսակցական լեզվից գրական լեզվի ունեցած մեծ հեռավորությունների մակրոիրադրություն:

Նկարագրված իրավիճակը նուրբ դրսևորում է գտնում, օրինակ, դասագրքերի հանձնարարություններում: Եթե լեզվաբանական գրականության մեջ ընդունվում է, որ «խոսքի բանավոր ձևը տարբերվում է գրավորից հնչերանգային մեծ հնարավորություններով [...]»¹⁶, և մի տեսակ լռելյայն, ճարահատյալ զիջումով համակերպվում ենք գրավոր խոսքում հնչերանգի պայմանականացման հետ, ապա դասագրքերի առաջադրանքներում հետևյալ իրավիճակն է. գրական լեզվի կանոնը գրական լեզվով շարադրված կանոնական միջավայրում ուղղակիորեն հակասության մեջ է մտնում գրավոր խոսքի իրադրական նպատակին: Աշակերտներին որևէ հանձնարարություն տալիս՝ *մտածի՛ր, գրի՛ր, կազմի՛ր* և այլն, հակասություն է առաջանում հրամայական եղանակի բայաձևերի պարտադիր շեշտման կետադրական կանոնի և աշակերտների հետ անմիջական գրույց սկսելու նպատակի միջև: Հղում անելով նաև հայ լեզվաբանների՝ վերը բերված հանրալեզվաբանական դիտարկումներին և այդպիսով մեղմելով կտրուկ փոփոխությունների պահանջի «օտարությունը»՝ կարելի է հարց տալ՝ խոսքի նպաստավոր միջնորդություն չի՞ կարող լինել, օրինակ, դասագրքերի հանձնարարությունների լեզուն՝ անցում կատարելու «կոշտ» գրական շեշտից դեպի դրա դերի նվազման:

Գրավոր և բանավոր հայերենների փոխազդեցությունների հարցն արծարծվել է նաև արևելահայերենի ու արևմտահայերենի համեմատության միջոցով: Լեզվաբան Արտեմ Սարգսյանը, դիցուք, հիշատակում է հայերենագիտության մեջ հայտնված այն կարծիքը, «ըստ որի՝ արևմտահայերենի կանոնը (նորման) շատ ավելի մոտ է կիրարկությանը, կենդանի-խոսակցական լեզվին, քան արևելահայերենը»¹⁷: Հանրալեզվաբանը հղում է անում համապատասխան լեզվաբանական ուսումնասիրության. «Պատկերավոր ասած, գրաբարի և արևմտահայ լեզվի զարգացման ուղղվածությունը կարելի է որոշել իբրև ներքևից վերև (այսինքն՝ խոսակցական լեզվից դեպի գրական-կանոնական լեզուն), իսկ արևելահայերենը՝ վերևից ներքև, ընդ որում, վերջինս ոչ այնքան ինքն է ձգտում մերձենալ խոսակցական լեզվին, որքան ժողովրդախոսակցական լեզուն է փորձում

¹⁶ Նույն տեղում, էջ 13:

¹⁷ **Ա. Սարգսյան**, Ընդհանուր և հայ լեզվաբանություն, 2018, էջ 337, http://language.sci.am/sites/default/files/book/girk_a.pdf (16.08.23):

մոտեցնել իրեն: Չի կարելի ասել, իհարկե, թե բացակայում է գրական լեզուն խոսակցական կենդանի արտահայտություններով հարստացնելու միտումը»¹⁸: Ա. Մարգարյանը հակադրվում է այս կարծիքին՝ պնդելով, որ իրականում և՛ արևելահայերենի կանոնը, և՛ արևմտահայերենի կանոնը զարգացել են «ներքնից վերև» ուղղությամբ, և գրական արևմտահայերենի՝ խոսակցական լեզվին ավելի մոտ լինելը բացատրում է այլ հանգամանքներով¹⁹:

Այսպիսով՝ գրական և խոսակցական հայերենների հարաբերությունների մասին հարցադրումներ անելիս հղումների որոշակի շրջանակ է ձևավորվում նախ հանրալեզվաբանության բնագավառի վկայակոչմամբ: Այդ օգնությունը հուշում է, որ լեզվի շարժուն բնույթի հղացականացման և լեզվաբանական անդրադարձի նոր կողմնորոշիչների ընտրության հարցում լեզվաբանության այս հարաբերականորեն առանձին ոլորտի հետաքրքրություններն ընդհանրական նշանակություն կարող են ունենալ: Խնդիր է, սակայն, հայաստանյան լեզվաբանության ավանդույթների հատվածականության հաղթահարումը, հատվածների կամրջումն ու վերամտածումը՝ արդի լեզվաբանության տարբեր ուղղությունների մոտեցումները նկատի ունենալով: Դա կնշանակի, օրինակ, հայաստանյան լեզվաբանության մշակած մոդելները քննարկելիս կիրառել նաև քննադատության դիրքեր և ուղղություններ, որոնք աշխարհի տարբեր լեզվաբաններ այսօր ուղղում են իրենց ուսումնասիրած բնագավառներում պատմականորեն ձևավորված մոտեցումներին: Հայաստանյան լեզվաբանության համար նման քննադատությունը գայթակղիչ հեռանկարում կստանա նաև այլ վեկտորներ՝ ուղղվելով, դիցուք, արևմտյան հետազոտողների քննադատած լեզվաբանական ավանդույթների բացակայության քննադատությանը:

Այսպես՝ «Դիտարկելով սոցիալականը որպես հաստատուն և արտաքին կառուցվածք, որն արտացոլվում է միայն լեզվական փոփոխականության (variability) մեջ՝ սոցիոլեզվաբանական փոփոխության ուսումնասիրությունը բարեհաջող կերպով մնացել է լեզվաբանության՝ որպես ճանաչողական գիտության սահմաններում: Ես սա ասում եմ՝ ոչ թե մերժելու համար այս ոգով կատարված աշխատանքի հետաքրքրությունն ու կարևորությունը, այլ նշելու, որ փոփոխությանը (և ողջ լեզվաբանությանը) վերաբերող ձեռնարկումները պետք է ներառվեն լեզվի՝ որպես սոցիալական պրակտիկայի ավելի համապարփակ ըմբռնման մեջ»²⁰, - ամերիկացի հետազոտողի այս տարակուսանքը հիմնավոր է թվում հայերենի ուսումնասիրման համատեքստում: Նույն հետա-

¹⁸ **Զ. Ջաբարյան, Լ. Հովսեփյան**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1983, էջ 192-193, մեջբերվում է ըստ՝ **Ա. Մարգարյան**, նշվ. աշխ., էջ 337:

¹⁹ Տե՛ս **Ա. Մարգարյան**, նշվ. աշխ., էջ 338:

²⁰ **P. Eckert**, Variation and the indexical field, Journal of Sociolinguistics 12/4, 2008, p. 453, <https://web.stanford.edu/~eckert/PDF/IndexicalField.pdf> (03.04.23): Այսուհետ աշխատանքին հղում անելիս շարադրանքում կնշվեն հեղինակի անունը և մեջբերման էջը:

գոտողը նկատում է, որ հանրալեզվաբանական փոփոխական (variation) ուսումնասիրություններում իմաստը դիպվածային խորհրդածությունների առարկա է եղել և ոչ առանձին ձեռնարկման բաղադրիչ (P. Eckert, 454): Թեմային վերաբերող իր հատուկ անդրադարձում նա պնդում է, որ «փոփոխականների նշանակությունները ճշգրիտ կամ կայուն չեն. դրանք ավելի շուտ հնարավոր իմաստների դաշտ են կազմում, ցուցչային դաշտ կամ գաղափարաբանորեն կապված նշանակությունների ամբողջություն, որոնցից յուրաքանչյուրը կարող է ակտիվացվել փոփոխականի իրավիճակային կիրառմամբ: Դաշտը շարժուն է, և յուրաքանչյուր նոր ակտիվացում կարող է փոխել դաշտը գաղափարաբանական կապերի հիման վրա: Այսպիսով փոփոխականը ձևավորում է մի ցուցչային համակարգ, որը գաղափարաբանություն է ներդնում լեզվի մեջ, և որն իր հերթին գաղափարաբանության կառուցման բաղադրիչ մասն է» (P. Eckert, 454): Ըստ այսմ՝ կարիք է առաջանում հետազոտելու «փոփոխականը որպես ցուցչային համակարգ, որտեղ մեկնակետ է ընտրված նշանակությունը և ոչ թե հնչյունային փոփոխությունները կամ կառուցվածքային հարցերը, որոնք էլ սովորաբար թելադրել են՝ որ փոփոխականներն ուսումնասիրել և ինչպես ուսումնասիրել» (P. Eckert, 454):

Փոփոխականը՝ որպես *իմաստի կառուցման ռեսուրս* (P. Eckert, 454), շեշտի առնչությամբ կարելի է տեսնել, օրինակ, եթե դիտարկենք շեշտի կիրառման համատեքստերը և գործածողների շրջանակը: Կարգավի, որ դրա պարտադիր կիրառման համատեքստն այսօր գրեթե բացառապես դասագրքային է, իսկ գրավոր խոսքի այլ հարթակներում այն գոնե որոշ չափով կիրառողները հայոց լեզվի ուսուցիչներն են: Սոցիալական շերտի հատկանիշ շեշտը դառնում է միջնորդավորված կերպով՝ գրագետ լինելու հատկանիշի, կանոնը պահելու պարտականության վերագրությամբ միայն՝ հիմնվելով ոչ թե կամ ոչ այնքան ձևակերպվող մտքի համատեքստի վրա, այլ «գրագիտության» արտաքին վերագրության վրա: Այդպես է, որովհետև գրավոր լեզվի կանոնը բազմազանության այլ տարբերակներ չի արտոնում:

Ասվածը փաստարկելու համար ևս մեկ հարց տանք՝ ի՞նչ է մեզ պատմում գրավոր հայերենը «հրամայելու» սոցիալական նշանակությունների մասին:

Հրամայական եղանակի բանավոր խոսքում հնչման բազմաթիվ նրբերանգներով հանդես եկող բայաձևերը գրական գրավոր խոսքում ոչ միայն գրկվում են հնչման ֆիզիկական հատկանիշների յուրահատկությունից, ինչը հասկանալի է, այլև դրանց՝ գրավոր խոսքում հնարավոր, կարելի է ասել, սահմանային վիճակներից՝ շեշտվածությունից կամ անշեշտությունից: Բանն այն է, որ կայուն և չտարբերակող, կանոնացված շեշտը հրամայական հնչերանգը վերածել է պարտադրանքի՝ չեղարկելով դրա բացակայության հնարավորությունը. եթե մի բան մշտապես, «ինքնաշխատ» կերպով միացված է այնպես, որ անջատման հնարավորությունը բացակայում է, ապա այն չի կարող անջատված վիճակ ունենալ:

Որոշ առումով այն ընդհանրապես միացված էլ չէ: Այլ կերպ ասած՝ կանոնացված հայերենում շեշտման բացակայության հնարավորություն չկա: Մա մի կողմից, իսկ իբրև հետևանք՝ այն, որ շեշտման նշանակությունն էլ չափազանց աղոտացված է: Կետադրական նշանն այլևս տեղեկություն չի տալիս առոգանության յուրահատկությունների և դրանց արտալեզվական բովանդակության վերաբերյալ: Առկայության և բացակայության, 0-ի և 1-ի գույզական հակադրության բացակայությունը գրկում է կանոնացված հայերենը լեզվական այս ձևի սոցիալական մեկնաբանության հնարավորությունից: Հայերենն առնվազն այս առնչությամբ չի կարող քննարկվել մի կարևոր հատկանիշի դիտանկյունից, որ սոցիոլեզվաբանը «սոցիալական նշանակության պոտենցիալ» (P. Eckert, 471) է անվանում: Նույն հետազոտողի դիտարկմամբ՝ «մինչ փոփոխական ավելի լայն հարակերպերը (pattern) կարող են արդյունավետ կերպով դիտարկվել ստատիկ սոցիալական լանդշաֆտի տեսանկյունից, դա միայն հեռավոր արտացոլումն է նրա, ինչ տեղի է ունենում բույս առ բույս գետնի վրա» (P. Eckert, 472): Հարցն ուրեմն լեզուն սոցիալական նշանակությունների՝ «բազմիմաստության» առջև բացելն է:

«Լեզու սովորելու ունակությունը, որը մարդը դրսևորում է ծնունդից ի վեր, անկասկած պահպանվում է կյանքի ընթացքում, քանի որ մենք ձգտում ենք հասկանալ լեզվաբանական ձևի սոցիալական նշանակությունը, երբ հետազոտում ենք լեզվաբանական փոփոխականությունը մեր շուրջ (P. Eckert, 456)», - նկատում է տեսաբանը: Հանրալեզվաբանության տեսակետից գայթակղիչ այս նպատակը մեր հոդվածի համատեքստում կարելի է լրացնել Հ. Չաքարյանի նույնքան գայթակղիչ նկատառմամբ. հանրալեզվաբանության վերջնական խնդիրներից է «լեզվի հասարակական տարբերակների ամբողջական համակարգի վերհանումն ու ուսումնասիրությունը»²¹, իսկ դրան հասնելու քայլերից մեկն էլ սա է՝ «գտնել հասարակական տարբերակվածության՝ միայն տվյալ լեզվին բնորոշ առանձնահատկությունները»²²: Կարծում եմ՝ շեշտի կիրառության վերաբերյալ վերն ասվածը հրամայական եղանակի բայաձևերի՝ շեշտով և անշեշտ փոփոխականների նշանակության վերլուծության տեսակետից էական դրվագ է: Մա օրինակներից մեկն է, որ ցույց է տալիս, որ հայերեն խոսողներին հաճախ միայն արտաքին՝ համատեքստերով ու իրավիճակներով չպայմանավորված հանգամանքներն են մնում՝ որպես գործաբանական կողմնորոշիչներ: Ստացվում է՝ հիմնական թելադրողներն են ոչ թե առանձին դիսկուրսները, այլ առավել ընդհանուր, «արտաքին», *կողմնակիորեն* հաստատութացված դիսկուրսները: Լեզվի հետ հարաբերման, կիրառության և անգամ լեզվագագեղության ասպարեզները շատ են «արտաքնացվել»: Եվ այս իրավիճակը կարող է հուշել Ֆուկոյի նմանությամբ հետազոտել այն իմացությունը (episteme), որ գիտականի կարգավիճակ է տալիս այս մոտեցմանը: Թերևս ռացիոնալությունից

²¹ «Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն», էջ 124:

²² Նույն տեղում:

զուրկ չէ այն վարկածը, որ գիտականը Հայաստանում դեռևս հոմանիշ է հայեցողականին:

Այս կետում լեզվի առնչությամբ նկատելի է մի թվացյալ հակասություն: Ինչպես նկատում է մշակութային քննադատ Ն. Բայադյանը, գրական հայերենն այսօր «տեղի է տալիս բոլորովին այլ իդեալների առջև մի ժարգոնային լեզվի, որն արտացոլում է իր ակունքներում դաջված ենթարկվածությունն ու բռնության մղումը, մարմնացնում նեղ խավային շահը, հաղորդակցության՝ պարզունակության հասնող միարժեքությունն ու անարգելությունը, որ շարունակ վերաճում է զուտ խավային պատկանելությունը հաստատող նշանների ցուցադրության: Նրան անմատչելի է դասակարգի և նրա լեզվի բարերար հեռավորությունը, օտարվածությունը, որ է՝ լեզվի ինքնավարության և արտահայտության ազատության գրավականը, հնարավորությունը՝ անտեսելու նեղ սոցիալական նախապատվություններն ու պարտադրանքները, գիտակցելու այնպիսի բաներ, ինչպես մարդկային արժանապատվությունն է և հասարակական շահը»²³: Բայադյանի նկատած «բարերար հեռավորության» չգոյությունը, եթե լեզվաբանական ճշգրտված եզրույթներով խոսենք, լեզվի և խոսքի միջև, մյուս կողմից՝ լեզուն կիրառող հանրույթի և նրա խոսքի միջև «բարերար հեռավորության» չգոյություն է: Այդ հեռավորության բացակայությունը ոչ միայն չի հակասում մեր վարկածին, այլև որոշ իմաստով օգնում է բացատրել այն: Ն. Բայադյանի տեքստում նկատելի է նախապատվությունը՝ տեսնել խոսք, որը որոշակիորեն, կայուն և նշանակալի կերպով միջնորդվում է լեզվով: Լեզվակիր հանրույթի և նրա խոսքի միջև հեռավորություն հաստատողը լեզուն կարող է լինել, այնինչ այն ավելի ու ավելի է անտեսվում՝ կորցնելով միջնորդելու իր լիազորությունը: Եվ եթե խոսքը շարունակ հղվում է սոցիալական պրակտիկային՝ լեզվի կարծեք թե նվազագույն միջամտությամբ, ապա այդպիսի լեզուն ոչ միայն զրկվում է «բարերար հեռավորություն» արտադրելու ներուժից, այլև կորցնում է գործնականության իր ողջ ներունակությունը՝ վերածվելով կողմնակի հաստատության, արտադրելով օրենքներ, որոնք հիմնվում են առավելապես ձևական հատկանիշների վրա և/կամ քաղաքական ազդեցությունների պասիվ արձագանք են: Այլ կերպ ասած՝ խոսքային պրակտիկաները շարունակ հղվում են անմիջական շահառուներին՝ կարծեք անկախանալով լեզվից և այդպիսով վերածելով լեզուն զուտ արտաքին, թեկուզ «սրբազան» վերագրությունների շտեմարանի:

Եզրափակիչ դիտարկումներ

Այսպիսով՝ բազմաթիվ են այն լեզվաբանական մոտեցումները, որոնց կարելի է հղում անել՝ ապացուցելու համար շեշտի պարտադրանքի անտեղիությունը:

²³ Ն. Բայադյան, Հարմարվողականության լեզուն, <https://hetq.am/hy/article/21387> (10.01.24):

Պարտադրանք, որը կարծես վերացնում է «բանավոր իրավիճակի» մասին տեղեկությունը գրավոր տեքստին փոխանցելու գործառույթը, որ ունի կետադրությունը: Թեպետ վերջին լեզվաբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համատեքստ չունեցող նախադասության իմաստի հաշվարկումը խնդրահարույց է, և լեզվական իմաստը միշտ գունավորված է *հաղորդակցային փոխանակման գործաբանությամբ*²⁴, պարտադիր շեշտադրման պահանջը, ըստ էության, հայերեն գրողներից դեռևս պահանջում է անտեսել համատեքստերը:

Շետազոտողի ընդհանրացնող դիտարկմամբ՝ «հաղորդակցային լեզվաբանության, լեզվական գործաբանության և ճանաչողական գիտության (կոգնիտոլոգիա) զարգացումը պայմանավորել է տեքստի ըմբռնումը որպես հաղորդակցային իրադարձության, իսկ կետադրական նշաններինը՝ յուրատեսակ նշանային համակարգի»²⁵: Կետադրությունն ըմբռնվում է նաև որպես տեքստի հաղորդակցային-գործաբանական ռազմավարության ստեղծման գործիք²⁶: Հաշվի առնելով ասվածը՝ հետևաբանական ոգով չե՛նք կարող ասել, որ լեզու-խոսք առանցքի վրա առնվազն կետադրության այս կոշտ թելադրանքի հատվածում հայերենով հոդավորվող իմաստի արտադրությունը լիարժեք կերպով չի կատարվում, քանի որ կանոնի կոշտությունը խոսքի մասնավորությունը միշտ ենթարկում է կանոնի տիրապետությանը: Տարբերությունը, որը, ըստ կառուցաբանների, իմաստի գոյացման հիմքերից է, չեղարկվում է կետադրական այս կանոնի կոշտությամբ, ավելին՝ չեղարկվում է տարբերության հնարավորությունը:

Այսպիսով՝ հայերենի շեշտն իրականում չի փոխանցում վերհատույթային (suprasegmental)՝ առոգանական տեղեկություն, քանի որ կանոնացված է: Պարտադիր լինելը գրկում է շեշտը եղանակավորման գործառույթից: Պարտադրվող շեշտը, կարելի է ասել նույնիսկ, այլևս ձայնի ուժգնությամբ չի չափվում, որոշ իմաստով այն այլևս նշույթ չէ: Շեշտն այլևս չի փոխանցում դիսկուրսի մակարդակի տեղեկություն կամ արտահայտում է միայն «վարչահրամայական» դիսկուրսի մակարդակի տեղեկություն:

Ասվածը, թերևս, բավարար է պնդելու համար, որ հնչերանգի և շեշտի հարաբերությունների առկա ըմբռնումը և դրա ամրագրումը հայերենի քերականության մեջ արդեն հնացած են: Այն մտահոգությունը՝ կարող է արդյոք գործաբանության ակտիվացումը կրճատել դրա «պատմական հեռավորությունը» և լեզվաբանական ավանդույթի վերահղացականացման հանգեցնել²⁷, թվարկված բոլոր լեզվաբանական մոտեցումներից հետո նույնիսկ դադարում է հետաքրքիր լինել իր այդ նախնական ձևով: Հարցը՝ արդյո՞ք հայերենի շեշտը լեզվաբանության մեջ

²⁴ Տե՛ս **R. Kempson**, The Puzzle of Language Use: How Do We Ever Understand Each Other? Pragmatics: Language and Communication, 2008, էջ 394-427:

²⁵ **Шаронова Е.** Коммуникативно-прагматический аспект пунктуации текста как средство языкового развития учащегося, «Вестник университета Российской академии образования», № 2, 2008, с. 65.

²⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 66:

²⁷ Տե՛ս **Մ. Կարապետյան**, նշվ. աշխ., էջ 101:

բավարար չափով է նկարագրվել, ի՞նչ համատեքստերում է նկարագրվել և լեզվաբանական ո՞ր մակարդակներում, դադարում է առաջնահերթ լինել, երբ գործաբանական դիտանկյան ընտրության արդյունքում տարժամանակյա մոտեցումից անցնում ենք համաժամանակյա մոտեցման: Սակայն ի՞նչ է տալիս տարժամանակյա անդրադարձը, որ հողվածում, այդուամենայնիվ, կատարվեց:

Կատարված անդրադարձն առնվազն կրկին ցույց տվեց, որ կարիք կա նկատի առնելու ինքնին լեզվաբանական ուսումնասիրության մակարդակների առկայության հարցը, երբ գնահատում ենք լեզվաբանական տարբեր դրույթներ ու մոտեցումներ: Անշուշտ, այս մտքին օգնության է գալիս կառուցաբանական և հետկառուցաբանական լեզվաբանության նշանավոր լեզվաբաններից մեկը՝ Է. Բենվենիստը: Անդրադառնալով լեզվական միավորները սահմանելու համար դրանցից վեր գտնվող մակարդակների դիմելու անհրաժեշտությանը՝ նա նկատում է, որ «մակարդակը ոչ թե վերլուծությունից դուրս է, այլ նրա մասն է կազմում, մակարդակը գործարկիչ է»²⁸: Թերևս սխալված չենք լինի՝ սկզբունքը կիրառելով սույն հողվածի քննարկած հարցերի առնչությամբ: Ըստ այդմ՝ գործաբանության բերած «հավելյալ շերտը», ինչպես կարելի է եզրակացնել նախորդիվ արված վերլուծությունից, և՛ հարստացնում է նախորդ մակարդակների արդյունքները՝ տեղադրելով հաղորդակցության դինամիկ գործընթացի թաղանթի մեջ ու այդպիսով ցույց տալով դրանց ավելի լայն համատեքստը, և՛, կարելի է ասել, նաև հարաբերականացնում դրանք: Այսպիսով՝ *համատեքստայնացում* և *հարաբերականացում* այս երկու ըմբռնումներն են, որոնց առնչությամբ կցանկանայի դիտարկել կետադրության, մասնավորապես շեշտի գործածության կանոնները: Դրանք կարող են օգնել թոթափելու որոշ կանոնների խստությունը՝ երևան բերելով կամ օգնելով նկատել դրանց պայմանականությունը, և այդ պայմանականությունը հաշվի առնելու խթան դառնալ:

Ավելի հեռուն գնալով՝ խնդիրը կարելի կլինի հողավորել այսպես՝ որոշ հարցերում հայերենում դրսևորվող պայմանականության մակարդակից անցնել իրականության մակարդակ(ներ)ի: Եթե այն կետադրական կանոնները, որոնք բեռնավորված են ոչ ֆունկցիոնալ պայմանականության մեծ չափով, դադարեն պարտադիր համարվել, լեզուն կբեռնաթափվի: Եթե կետադրական նշանների գործառական նշանակությունը պայմանական չէ, եթե դրանց ոչ պայմանականությունն ապացուցվում է առնվազն գույգական հակադրության առկայությամբ²⁹, և եթե այդ գործառական նշանակությունն իսկապես նշանակալի է կետադրման պրակտիկաներում, ապա գրավոր լեզուն կարող է բացվել

²⁸ Է. Բենվենիստ, Ընդհանուր լեզվաբանության խնդիրներ, հ. 1, Եր., Սարգիս Խաչենց, Փրինթ-ինֆո, 2023, էջ 173:

²⁹ Հակադրական գույգերի միջոցով լեզվական իմաստների արտահայտման մասին գրել եմ կետադրելու վերաբերյալ իմ նախորդ անդրադարձում: Տե՛ս Մ. Կարապետյան, Կետադրելու («)ազատությունը(»), <https://groghutsav.am> (11.01.24):

նոր իմաստների առջև: Այն կարող է հարստանալ սեփական, ինչպես նաև բանավոր խոսք(եր)ի նրբերանգներով, դառնալ առավել կենդանի՝ այդպիսով նաև ավելի իրական դարձնելով իրավիճակի և խոսքի միջև «բարերար հեռավորություն» հաստատելու «միջնորդական առաքելությունը»:

МАРИАМ КАРАПЕТЯН – Использование армянского ударения. Направления лингвистики и уровни анализа языка как контекст оспаривания. – В статье рассматривается необходимость обновления взгляда на одну из важных областей лингвистики - на вопросы пунктуации, на примере использования ударения. В том, что требование обязательного или часто практически «добровольно-обязательного» ударения вызывает недоумение, можно убедиться, ознакомившись с аргументами ряда армянских лингвистов, тем более с теориями многих зарубежных лингвистов, которые разработали бесчисленное множество уточняющих друг друга логик по вопросам, связанным с языком.

Предметом этой статьи является возможный вклад некоторых современных теорий лингвистики в вопросах использования ударения, а также в понимание функций пунктуации в целом. Утверждения армянских и иностранных лингвистов, рассматриваемые в статье, создают круг подходов, по сравнению с которыми можно обсудить правила использования знаков препинания и, в частности, ударения.

Статья представляет собой попытку выделить некоторые ориентиры из мировой лингвистики, которые помогут быть смелее в поиске решений актуальных проблем армянского языка.

Ключевые слова: *противопоставление языка и речи, использование ударения, пунктуация повелительного наклонения, пунктуация обращения, взаимосвязь лингвистических уровней, социальная значимость языковой формы, прагматический потенциал ударения*

MARIAM KARAPETYAN – The Use of the Armenian Stress. Directions of Linguistics and Levels of Language Analysis as a Context of Contestation. – The article discusses the need to update the view on one of the important areas of linguistics - punctuation issues, using the example of the use of stress. The fact that the requirement of mandatory or often practically "voluntary-mandatory" stress is perplexing can be seen by familiarizing oneself with the arguments of a number of Armenian linguists, especially with the theories of many foreign linguists who have developed countless clarifying logics on issues related to language.

The subject of this article is the possible contribution of some modern linguistic theories in the use of stress, as well as in understanding the functions of punctuation in general. The statements of Armenian and foreign linguists considered in the article create a range of approaches, in comparison with which it is possible to discuss the rules of using punctuation marks and, in particular, stress.

The article is an attempt to highlight some landmarks from world linguistics that will help us be bolder in finding solutions to the actual problems of the Armenian language.

Key words: *the opposition of language and speech, the use of stress, punctuation of the imperative mood, punctuation of vocatives, the relationship of linguistic levels, the social significance of the linguistic form, the pragmatic potential of stress*